

Մարտի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 19 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտարկերտ ավտոճանապարհի Սոսք-Քարավաճառ խաչմերուկ, Քարավաճառ խաչմերուկ-Չարեքթար և Չարեքթար-Դրմբոն հատվածների կառուցման տեխնիկական հսկողություն» օժանդակ ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Թվայնացման օգնությամբ վաղ շրջանի տպագրված քարտեզների, ամսագրերի, թերթերի երկարաժամկետ պահպանումը և դրանց հասանելի դարձնելը համացանցում» ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էջմիածնապատկան վանքերի տնտեսական պայմանների բարելավում», «Սուրբ «Տրդատ» բաց խորանի տարածքի բարեկարգում», «Իզմիրյան բժշկական կենտրոնի տեխնիկական արդիականացում», «Հաղարծին վանական համալիրի մուտքի բարեկարգում» և «Սևանի Վազգենյան դպրանոցի տնտեսական պայմանների բարելավում» ծրագրերը.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Սյունիքի մարզի Հալիձոր գյուղի դպրոցի շենքի վերակառուցում» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Արգավանդ գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում» և «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի շինվերանորոգում» ծրագրերը.

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2014-2015 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցյի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում» ծրագիրը.

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից՝ 2014 թվականի ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» և 2014 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտապես ապահովում)» բարեգործական ծրագրերը.

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մի շարք հաստատությունների կահույքի տեղադրում» ծրագիրը.

«Պատմոս-Արարատ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Յերեկային վերականգնողական կենտրոն» ծրագիրը.

«Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միություն Հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գէյնը Հայաստանին» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Կենսաանվտանգության և կենսաապահովության կարողությունների հզորացում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: